*Հավելված N 1*
*ԲԿԳԿ-ՆԲՄԾՁԲ-25Խ/49 ծածկագրով գնման*
*ընթացակարգի գնահատող հանձնաժողովի*
*2025թ.-ի դեկտեմբերի 2-ի N4 արձանագրության*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերի պարզաբանման մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 4 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

**Ընթացակարգի ծածկագիրը՝ ԲԿԳԿ-ՆԲՄԾՁԲ-25Խ/49**

ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կարիքների համար գնումների համակարգման և գնումների խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԲԿԳԿ-ՆԲՄԾՁԲ-25Խ/49 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2025 թվականի դեկտեմբերի 1-ին ժամը 09:27-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2025 թվականի դեկտեմբերի 2-ին տրամադրված պարզաբանումները՝

**Հարցադրում N1:** «Հարգելի Գործընկեր, Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի դրույթները, խնդրում եմ սահմանված ժամկետներում պարզաբանել՝ ԲԿԳԿ-ՆԲՄԾՁԲ-25Խ/49 ծածկագրով ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագրագույն կրթության և գիտության կոմիտեի կարիքների համար՝ գնումների համակարգման և գնումների խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված բաց մրցույթի հրավերի 2,4 կետի.

«Մասնագիտական փորձառություն» Պարտադիր պայման է հանդիսանում մասնակցի մասնագիտական պատասխանատվության ապահովագրության առկայությունը» եզրույթը:

Մասնավորապես, ինչ փաստաթուղթ կամ հավաստում պետք է ներկայացվի Մասնակցի կողմից վերոնշյալի վերաբերյալ»:

**Պարզաբանում N1:** «ԲԿԳԿ-ՆԲՄԾՁԲ-25Խ/49 ծածկագրով գնման ընթացակարգի դեպքում Պարտադիր պայման է հանդիսանում մասնակցի մասնագիտական պատասխանատվության ապահովագրության առկայությունը՝ ապահովագրված անձի գործունեության հետևանքով պատճառված վնասների փոխհատուցման և հնարավոր ռիսկերի նվազեցման նպատակով:

Հիմնավորման նպատակով մասնակիցները պետք է ներկայացնի համապատասխան ապահովագրության առկայությունը հիմնավորող փաստաթղթերի պատճենները:

ԲԿԳԿ-ՆԲՄԾՁԲ-25Խ/49 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 20-րդ կետի համաձայն.

Մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր»:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ԲԿԳԿ-ՆԲՄԾՁԲ-25Խ/49 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Ռ. Բաղդասարյանին:

Հեռախոսահամար՝ +374 98 30 50 99
Էլ. փոստ՝ r.baghdasaryan@hesc.am
Պատվիրատու՝ ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե